

Ա. ՍԵԻԳ-ԶԱԳԻ

### ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՂԱՍՈՒԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աղասու՝ Վ. Արուստանի «Վերք Հայաստանի» վեպի հերոսի, նախատիպի իրական գոյությունը կասկածից դուրս է։ Այս հոդվածում մենք կփորձենք նոր տվյալներ բերել հալ ժողովրդի այդ լեգենդար հերոսի կյանքի մասին։

«Վերք Հայաստանի»-ի «Հատուկ անուններ»-ի ցանկում<sup>1</sup>, Աղասու վերաբերյալ մանրամասն տեղեկություններից հետո, կարդում ենք.

«Աղասին ոչ միայն իրական-պատմական անձ է, այլև, ինչպես ասված է վեպի Ա. ձևագրում՝ «Ապովենց օջախի որդին» (տե՛ս «Վերք Հայաստանի», Ա. ձևագիր, էջ 156), այսինքն՝ սերում էր Արուստանների տոհմից<sup>2</sup>։

Թե՛ Երբ է ապրել և գործել Աղասին, երբ և ինչպես է սպանվել և այլն, այդ հարցի մասին եղած ազդյուններում միասնական կարծիք չկա։ Ավելին։ Ոչ միայն որոշ հեղինակների վկայություններն են հակասում այն բանին, ինչ ասում է Արուստանը՝ Աղասու կյանքի ամենալավ գիտակը, այլև որոշակի հակասություններ կան հենց իր՝ Արուստանի վկայությունների միջև։

Որքան մեզ հայանի է, հալ գրականություն մեջ Աղասու մասին գոյություն ունեն միայն մեկ մարդու հիշողությունները, որը եղել է 1827 թ. Երևվանի գրավման օրերին տեղի ունեցած իրադարձությունների ականատեսը։ Իրանք հայանի գրող Պերճ Պոռշյանի (1837—1907) հոր հիշողություններն են, որոնք հետագայում նրա որդին հրապարակեց մամուլում<sup>3</sup>։

Հետաքրքիր կլինեն այս ականատեսի վկայությունները համեմատել Աղասու մահվան այն նկարագրության հետ, որ տրված է Վ. Արուստանի վեպում և ցույց տալ դրանց միջև եղած նմանություններն ու տարբերությունները։

Նմանություններ՝ 1) մահվան օրը՝ 1827 թ. հոկտեմբերի 1-ը, 2) ուսական ծառայության մեջ սպա լինելու փաստը, 3) սպանված է պարսիկների կողմից։

Տարբերություններ՝ 1) Աղասին սպանվել է ատրճանակով—Վ. Արուստանի մոտ նա սպանվել է դաշույնով և թրով, 2) Աղասին սպանվել է բերդի դարպասների մոտ, մինչև բերդի առումը—Վ. Արուստանի մոտ նա բերդ է դալիս՝ վերջինս ոտանների կողմից գրավելուց հետո, թափանցում է այնտեղ և սպան-

<sup>1</sup> Այստեղ և ամենուրեք մենք նկատի ունենք Վ. Արուստանի «Վերք Հայաստանի»-ի տեղեկատվական հրատարակությունը, Հայպետհրատ, Երևան, 1948։

<sup>2</sup> Խ. Արուստան, Վերք Հայաստանի, էջ 393։

<sup>3</sup> Տե՛ս «Աղբյուր» ամսագիր № 3, 1902։ Այս հոդվածը գրելու համար մենք օգտագործել ենք նշված հիշողություններից միայն մի բանի տող, որոնք թարգմանաբար բերված են «Վերք Հայաստանի»-ի 1918 թ. ուրաներին հրատարակության մեջ։ Մենք փորձել ենք Պերճ Պոռշյանի հոր մասին որոշ տեղեկություններ ստանալ գրողի որդուց, որ մշտապես ապրում էր Բաքվում, բայց ոչինչ չի հաջողվել իմանալ, բացի նրա անունից (Ստեփան) և մի բանի կենսագրական տեղեկություններից, որոնք մենք օգտագործել ենք այս հոդվածում։

վում բերդում բանտարկվածների մեջ իր հորը որոնելիս, 3) նրան սպանել են ոչ թե բերդը պաշտպանող պարսիկ զինվորականները, այլ «այն մարդկանց հայրերը, եղբայրները և ազգականները, որոնց նա առաջ սպանել էր»:

Այսպիսով, տարբերությունները բավական էական են, և եթե Պերճ Պոռշյանը կամ նրա հայրը այդ զինվորականին «Աղասի» չանվանելին, ապա չէր կարելի համարել, որ երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է միևնույն մարդուն:

Այս աղբյուրներից որն է ավելի ճիշտ նկարագրում Աղասու կյանքի վերջին օրը: Եթե մենք մեր տրամադրության տակ ունենալինք միայն այս երկու աղբյուրները, ապա անպայման պետք է հանգեինք այն եզրակացության, որ Աղասու վախճանը, ըստ երևույթին, ավելի ճիշտ է լուսաբանել Պոռշյանը, իսկ Արովյանը, իր վեպի ֆուրուլային համապատասխան, Աղասու վախճանը այլ կերպ է տվել:

Ինչու:

Այստեղ առաջին հերթին պետք է նշել, որ Արովյանը, որը չի եղել այդ իրադարձությունների ականատեսը, բուն վեպի տեքստից դուրս ոչ մի վկայություն չունի Աղասու մասին<sup>1</sup>, ուստի և կարելի է կարծել, որ նա ընդհանրապես վիպականացնելով Աղասուն, տվյալ դեպքում հեռացել է իրականությունից, մինչդեռ Պոռշյանը շարադրում է միայն այն փաստերը, որոնց վկան հենց ինքն է եղել:

Այնուհետև պետք է նշել, որ Աղասու կյանքի իրադարձություններն Արովյանը շարադրում է ոչ միայն ոչ խիստ ժամանակագրական կարգով, այլև ընդհանրապես այն պատմական շրջանակներից դուրս, որոնց մեջ իրականում ընթացել է Աղասու կյանքը:

Փորձենք դիմել վեպի աճ գործող անձանց, որոնց կյանքի իրադարձությունները, այդ ժամանակի պատմության տվյալներով, լիովին ենթակա են թվագրման:

Սկսենք Երևանի սարդար Հյուսեին-խանից՝ «Վեշք Հայաստանի» վեպի գլխավոր բացասական գործող անձից:

Հյուսեին-խան Կաջարը Երևանի սարդար է նշանակվել 1797 թ.: Դրանից առաջ նա Խորասանի բեղլարբեյն էր: Խան է մնացել մինչև բուն 1827 թ.: Թեև Արովյանն այդ մասին խոսում է արդեն այն բանից հետո, երբ աղջիկն առևանգվել էր և Աղասին կազմակերպել էր իր ջոկատը, բայց հաշվի առնելով, որ իրադարձությունները այսպես թե այնպես ծավալվում էին մոտավորապես այդ ժամանակ, կարելի է այդ հիմք ընդունել և գտնել, որ դա Հյուսեին-խան Կաջարի խանությունից սկիզբն էր, մանավանդ, որ ինքը՝ Արովյանը ևս վեպի սկզբում խոսում է այն մասին, որ այդ խանը լավ էր վերաբերվում

<sup>1</sup> Բացառություն է կազմում Արովյանի պահպանված նամակներից միայն մեկը, որն ուղղված է Բողենշտեյտին և որտեղ նա պարզաբանում է, որ առևանգված Թադուհին եղել է Աղասու հարադատ քույրը, մինչդեռ «Վեշք Հայաստանի» վեպից դա այնքան էլ պարզ չէ: Արովյանն այստեղ բնավ չի շոշափում Աղասու գործունեության և մահվան թվագրման մեղ հետաքրքրող հարցերը:

Բայց նույնիսկ այստեղ էլ մենք տեսնում ենք Արովյանի միակ վկայությունը իրական Աղասու մասին: Արովյանը նշում է, որ Աղասին մեկնել է Ռուսաստան: Այն իմաստով, ինչ իմաստով Արովյանը զրել է այս խոսքերը, դրանց տակ միանգամայն կարող է հասկացվել Ղարաբաղը:

հայերին, մի րան, որ նույնպես ճիշտ կլինեի վերադրել նրա խանության սկզբնական շրջանին: Այդ ժամանակաշրջանի պարսիկ պատմիչները ևս խոսում են այն մասին, որ Շնա կարգավորեց իր հպատակների գործերը: Նա, իհարկե, ավելի էր նվիրված Գաջարների ուժեղին, քան Երևանում գտնվող պարսիկներից մեկ ուրիշը, այդ թվում և իր եղբայր Հասան-խանը, ասենք նա ինքն էլ Գաջար էր, բայց իր խանության սկզբում նա Վսիռախան էր անում: Հայերի հետ, ձգտելով նրանց գրավել Պարսկաստանի կողմը:

Գան նաև մի շարք այլ նկատառումներ, որոնք նույնպես խոսում են այն մասին, որ այդ իրադարձությունները, ըստ Արովյանի, պետք է տեղի ունեցած լինեին Հյուսիս-խան Գաջարի խանության սկզբում: Դրանց թվին է պատկանում, օրինակ, այն ժամանակ Երևանում մուլեզնոգ խուլերան: Պետք է ասել, որ խուլերան Երևանում եղել է նույն՝ 1797 թ.: Նույնիսկ Ահմեդ-խանը, որ նույն թվականին նշանակվել էր Երևանի սարգար ու խան և միայն նոր էր եկել իր նշանակման վայրը, հիվանդացավ խուլերալով: Հենց այդ ժամանակ էլ նա ծանր հիվանդ վիճակում հետ կանչվեց Պարսկաստան և նրա տեղը նշանակվեց հիշյալ Հյուսիս-խանը:

Բայց այդ դեպքում չի կարելի որոշել այն «5 տարիները», որոնց ընթացքում Աղասին, Արովյանի արտահայտությամբ, «սարերի տերն էր», քանի որ մատնանշված ժամանակամիջոցից (1797—1827) կտացվեն 5—6 այդպիսի հնգամյակներ (ևս արդեն չեմ խոսում այն մասին, որ վեպի գործող անձինք ամենատարբեր, իրարից հեռու ժամանակներում խոսում են առ նույն «5 տարիներին» մասին):

Այդպիսի օրինակներ կարելի է շատ բերել:

Բայց իր հերթին Պերճ Պոռշյանի վկայությունը ևս այնպիսին է, որ մենք չենք կարող ամբողջովին հենվել նրա վրա: Այսպես, ծնված լինելով 1837 թ., նա իր հոր հիշողությունները լսել է 1847 թ., 10 տարեկան հասակում, իսկ դրանք հրապարակել է 1902 թ., այսինքն՝ գրեթե 55—56 տարի հետո:

Այնուհետև, այն ժամանակ, երբ Պերճ Պոռշյանը հրապարակում էր իր հոր հիշողությունները, Երևանի բերդի գրավմանը վերաբերող մի շարք միանգամայն հավաստի արխիվային փաստաթղթեր, ինչպես կտեսնենք ստորև, արդեն հրապարակվել էին վաղուց, դրանից 20—25 տարի առաջ (օրինակ, 1870 թ. «Ակտեր»-ում, Երևանի հին բնակիչների հիշողությունները 1884 թ. և այլն), իսկ գեներալ Կրասովսկու «Օրագիրը» հրապարակվել էր գրեթե մեկ տարի առաջ: Հաղիվ թե այս բոլոր նյութերն անհայտ մնացած լինեին նրան:

Այդ հարցի լուսարանման համար մենք կարող ենք շատ հետաքրքիր նյութեր քաղել պարսկական սկզբնաղբյուրներից:

Աղասու մասին անհրաժեշտ տեղեկություններ կան, օրինակ, չափազանց ուղիմատենչորեն տրամադրված պարսկական պատմագիր Արդուլ Ռեզզակ-բեկ Նաջաֆ Կուլի-խան օղլի Դունբուլի<sup>1</sup> կամ Դումբուլի (1762—1827) «Մասսիր»

<sup>1</sup> Դումբուլին գրադրվում էր նաև պոեզիայով (պոեզիայի մեջ նրա ծածկանունն էր «Մեֆտուն») և նույնիսկ թողել է իրեն ժամանակակից բանաստեղծությունների մի ժողովածու՝ «Նիզյարստան» վերնագրով: Իր կյանքի վերջին շրջանում նա Թավրիզի բեգլարբեգն էր:

Նրա տվյալ գիրքը այժմ խիստ հազվագեպ պատահող այն երկու-երեք գրքերից է, որոնք լույս է ընծայել հիջրայի 1241 թ. (մ. թ. 1825 թ.) Թավրիզում բացված տպարանը:

է-Սուլթանին» (սուլթանական հիշարժան գործեր) գրքում, որտեղ նա շարադրում է Պարսկաստանի պատմությունը՝ Կաջարների գինաստիաչի ծագումից (հիշրայի 1193 թ. = մ. թ. 1779 թ.) մինչև 1825 թ.<sup>1</sup>։

Ի թիվս հիշրայի 1226 թ. մի շարք իրադարձությունների, գրքում կարգում ենք նաև հետևյալի մասին. «Պոլսիցի սարքազների մի ֆուլադ (գունդ) զնդապետ էրսան-խանի հրամանատարությամբ, որոշ թվով գոլլամ-հրացանակիրների հետ միասին հրաման ստացան (Արբաս-Միրզայից — Ս. Ջ.) պատժել Կարաբաղի Ախ-Բանի հայերին։ Եվ չնայած այն բանին, որ Վերդ-գալա» բերդը Կարաբաղի հայտնի բերդերից մեկն է, հիշյալ հայերը այն բավականաչափ հուսալի չհամարեցին և նույն օրերին (երբ նրանց մոտենում էին պարսից զորքերը — Ս. Ջ.) այդ վայրից տեղափոխվեցին մի չափազանց անմատչելի վայր, որը բոլոր կողմերից 12 ֆարսախ երկարությամբ շրջապատված էր ջանգլավով (մանր, անանցանելի մացառներով — Ս. Ջ.)։ Սարքազները և գոլլամ հրացանակիրները Ջիրանի ազատ ճանապարհով անվնաս կերպով հասան նրանց, կատաղի մարտի բռնկվեցին և ի վերջո նրանց կանաչք ու երեխաները գերվեցին, նրանց բարիքն ու անշարժ գույքը կողոպտվեցին, իսկ նրանց տղամարդկանցից շատերը սպանվեցին։ Դրանից հետո «Պուղաֆերին» կամուրջով անցնող ճանապարհով վերադարձան Կարաջադադ, և ճանապարհին նույն հալ տղամարդկանց մնացորդները, որոնք ջանգլավի մեջ մտնելով փրկվել էին հաղթական զորքի ճանկերից, երկու օրվա ընթացքում ջոկատներով թափնվում էին ջանգլայի ծառերի մեջ և ապա, սովորաբար անսպասելիորեն, հարձակվում էին (պարսից զորքերի վրա — Ս. Ջ.) ու հրաձգություն կատարում, կռվում էին բոլոր ուժերով, հենց որ կարող էին, այնքան ժամանակ, մինչև Աղասի անունով նրանց ավագն սպանվեց։ Դրանից հետո մնացածները այլ ելք չունենալով և ակամա ձեռք քաշելով գույքից, կանանցից ու երեխաներից, ստիպված եղան վերադառնալ միննույն վայրը...»<sup>2</sup>։

Աղբյուրի վերլուծությունն սկսենք Աղասու ջոկատի գործողությունն շրջանի հարցերից։

Աղասու ջոկատը, համաձայն Դուներուլիի գրքից բերված վերոհիշյալ տվյալների, գործում էր գլխավորապես Կարաբաղում, գոնե նկարագրված ժամանակաշրջանում։ Պարսից զորքերը, Դուներուլիի խոսքերով, նախընտանից ուղղակի շարժվեցին «Կարաբաղի հայերի» դեմ։ Կարաբաղում Աղասու ջոկատի գտնվելու մասին վկայում են նաև Դուներուլիի հիշատակած վայրերի ու բերդերի անունները։ Դրանք նշելիս հեղինակը շարունակ ավելացնում է «Կարաբաղի» բառը, ըստ երևույթին հաշվի առնելով, որ համանման անուններ գոյություն ունեն նաև մյուս իսանություններում։ Պարսից զորքի վերադարձի ճանապարհը ևս, որն անցնում էր Պուղաֆերինի կամուրջով և որի մոտ վրձ-

Նույն թվականին էլ լույս տեսել նաև Դուներուլիի դիրքը Այդ գրքից մեր վերջրած բոլոր ընդհանուր տեղեկությունները մենք նշում ենք՝ ջուլյց տալով նրա համապատասխան էջերը, չտալով բառացի թարգմանություն։ Սակայն այնտեղ, որտեղ խոսքը վերաբերում է անմիջականորեն Աղասուն և նրա ջոկատին, մենք տալիս ենք այդ տողերի բառացի թարգմանությունը։

<sup>1</sup> Դուներուլիի այս դիրքը թարգմանել է հայերեն և հրատարակել Sir Harford Jones Brydges անվան տակ «The Dynesty of the Kajar» (London, 1833)՝.

<sup>2</sup> «Սասիր-է-Սուլթանին», էջ 262—263։

ռական կոիվ տեղի ունեցավ այդ գործի և Աղասու փոքրածիվ, բայց խիզախ ջոկատի միջև, հաստատում է այդ:

Բայց նկատի ունենալով այն, որ վայրերի այն ժամանակվա անուններն այժմ դուրս են եկել գործածությունից, ինչպես և այն, որ դրանց արաբերեն տառադարձության մեջ յուրահատուկ «տարրնթերցանությունների» հետևանքով փոփոխություններ են առաջացել, մենք այդ անունների վրա կանգ կառնենք առանձին-առանձին:

1. «Աղ-բանը» Ղարաբաղում: Այս դուռի անունը Դունբուլիի մոտ գրաված է «Ախ-Բան»։ «Սպիտակ»-ի նշանակություն ունեցող «Աղ» բառի այդպիսի գրությունը քավական հաճախ է պատահում, օրինակ՝ «Աղ-օղլան» և այլն: «Աղ-Բան» աղբյուրներն նշանակում է «սպիտակ շինություններ», որը, ակներևաբար սոսկ հայերենի թարգմանությունն է, քանի որ այդ գյուղում, նույնիսկ Դունբուլիի՝ 1811—1812 թթ. վերաբերող հաղորդման համաձայն, ապրում էին միայն հայ գյուղացիներ և այն հայերեն կոչվում էր «Սպիտակ շեն»<sup>1</sup>: Ավելի ուշ, 1870—1880-ական թվականներին, այդ դուռն աղբյուրներն կոչվում էր «Աղ-Քյանդ», որ նույնն է նշանակում, թեև «շեն» նշանակում է «բան» և դա վկայում է, որ այն առաջ իրոք (և ավելի ճիշտ կերպով) կոչվում էր «Աղ» (կամ «Ախ»)-բան:

2. «Գըզ-Գալա» բերդը Ղարաբաղում<sup>2</sup>: 1870—1880-ական թվականներին այդ բերդն արդեն կոչվում էր «Կարա-Քյանդ» (հիշյալ գյուղի անվան «ասոցիացիայով»), երբ բերդն արդեն կանգուն չէր: Բայց «ցանկում» մատնանշվում է, որ նրա հին անունը եղել է «Կըզ-Կալա» կամ «Գըզ-Գալա»: Հին ժամանակ այդ վայրի անունը թե՛ հայերի և թե՛ աղբյուրների մոտ բոլորովին միատեսակ է եղել: Ավելի ուշ այդ գյուղում ապրում էին միայն հայեր: Աղբյուրը նույնպես նշում է, որ դա Ղարաբաղի հայտնի բերդերից (սղնախներից) մեկն էր:

3. «Ջիրան»: Այդ վայրի անունը մեր աղբյուրների հիման վրա դեռ չի պարզված: Արարական այբուբենի առանձնահատկությունների հետևանքով այն կարելի է կարդալ «Ջելրան», «Ջիրան» և այլն:

Ամեն ինչից երևում է, որ պարսից կառավարությունը խիստ մտահոգված էր Աղասու ջոկատի ռազմական գործողություններով և իր առաջ խնդիր էր դրել «պատժել հայերին» (տեքստում՝ «զոնշիմալ-ի արամինէ» = քաշել ականջը), ուստի և ստեղծեց հատուկ պատժիչ զորամաս (արշավախումբ)՝ Աղասու ջոկատը լիկվիդացնելու համար:

<sup>1</sup> Մենք, ցավոք սրտի, հնարավորություն չենք ունեցել այլ աղբյուրներ բերել և սահմանափակվել ենք միայն հետևյալ հրատարակությամբ. «Свод статистических данных о населении Закавказского края извлеченных посемейных списков 1886 г.», Тифлис, 1893, порядк. №№ 1354—1357. Ինչպես երևում է Անդրկովկասյան վիճակագրական կոմիտեի արխիվային գործից, այդ տեղեկություններն իրենց հերթին հենվում էին 1860 թ. հավաքված նյութերի վրա: Բայց ավելի վաղ շրջանի նյութերը ևս խոսում են հիշյալ վայրերի նույնպիսի անունների մասին: Հմտ. Ведомость об армяно-григорианских церквях Карабахской епархии՝ 42 (Սպիտակ-Շեն, 43) Գղգալա և այլն:

<sup>2</sup> Դունբուլիի դրքում այդ բերդը կոչվում է «Գըզ-Գալա» և ոչ թե «Գըզ-Գալա», ընդ որում այդ «ը» տառը պետք է համարել վրիպակ, որով այնքան լի է այդ դիրքը, մանավանդ, որ այստեղ տարբերությունը միայն մի կետ է, որ պետք է գրվեր «ը»-ի վրա, որպեսզի այն դառնար «դ» (օր. յ = բ, յ = գ): Դրանում հարկ չկա տարակուսելու նաև այն պատճառով, որ Ղարաբաղում «Գըզ-Գալա» անունով բերդ չկա:

Այդ զորքը կենտրոնացված էր Նախիջևանում, որտեղ իր զորքի հետ գտնվում էր Արքա-Միրզան, որը վերահաս ձմռան կապակցությամբ վերադառնում էր Պարսկաստան և մինչև գարուն մտադիր չէր դործողություններ սկսել ռուսների դեմ: Աղբյուրը հետևյալ տեղեկություններն է տալիս պատժիչ զորամասի կազմի մասին. նրա մեջ էին մտնում խոյի սարքազների մեկ «ֆոուջ» (գունդ), Եխսան-խանի հրամանատարությամբ և գոլյամ-հրացանակիրները (հրազենով զինվածները): «Դոլլամների» թվի մասին աղբյուրը, ցավոք սրտի, ոչինչ չի ասում:

Դուներուլիի հաղորդումից մենք իմանում ենք, որ պարսից պատժիչ արշավախմբի գալուց առաջ Աղասու ջոկատը գտնվում էր Վերդ-Գալա՝ բերդում (Ախրան վայրում), որն այն ժամանակ պարսիկները համարում էին ամենաանմատչելի բերդերից մեկը: Այդ ընդունում է նաև ռազմական պատմաբան զենեռալ-մայոր Պոտտոն, ըստ որի Վերդ-Գալա-ն գտնվում էր Արաքսի աջ ափին և պարսիկների կողմից համարվում էր խիստ դժվարամատչելի: Բայց ինչ-որ պատճառով պարսից զորքի մոտենալու օրերին Աղասին վճռեց թողնել այդ բերդը և անցնել մի այնպիսի վայր, որը բոլոր կողմերից 12 ֆարսախ<sup>2</sup> երկարությամբ պաշտպանված էր խիտ մացառներով: Պարսից զորքը Աղասու ջոկատին հասավ «Ջիրանի» բաց ճանապարհով:

Հաղորդումից պարզվում է մի էական մանրամասնություն՝ ճակատամարտը Աղասու ջոկատի և պարսից զորքի միջև եղել է շատ համառ: Աղբյուրի այն խոսքերից, թե վերադարձող պարսից զորքի վրա ճնորից հարձակվեցին նույն հայ տղամարդկանց մնացորդները, պարզ է դառնում, որ հիշյալ ճակատամարտում պարսից զորքի դեմ կռվում էր Աղասու նույն ջոկատը, որն այն ժամանակ պարտություն կրեց, բայց հետո ուժերը հավաքելով սկսեց հարձակումներ գործել վերադարձող պարսից զորքի վրա:

Դուներուլիի այս տվյալները հաստատում են, որ Աղասին իրոք ուներ հայերից կազմված բազմաքանակ և ուժեղ ջոկատ, որն զգալի կորուստ պատճառեց պարսից զորքին:

Այնուհետև անհրաժեշտ ենք համարում այստեղ հատկապես նշել, որ առհասարակ այդ շրջանում հայ և ադրբեջանցի գյուղացիները չարաբաղում պարսից զորքերի դեմ հաճախ գործում էին համատեղ: Այդ հարկադրված է ընդունել նույնիսկ Դուներուլին, որի դառնությունն այդ առթիվ երևում է այն բանից, որ նա այդ մասին գրում է շատ քողարկված արտահայտություններով: Այսպես, նա գրում է (Չարաբաղի մասին). «Հայերը և այդ կողմերի բնակչությունը իրենց քոչավայրն ու գույքը տեղափոխեցին այլ տեղ, իսկ իրենք ամրացան ճանապարհին և իրենց համար դիրքեր ստեղծեցին նրանով, որ ճանապարհը փակեցին ծառերով, որոնք հատուկ ձևով այնպես էին կապված իրար հետ, որ այդ ճանապարհով անցնելու (պարսից զորքի համար—Ս. Ս.) ոչ մի հնարավորություն չկար»<sup>3</sup> և այլն: Պարզ է, որ այդ կողմերի բնակչությունն ասելով պետք է հասկանալ ադրբեջանցիներին, թեև Դուներուլին խուսափում է այդ անունը գործածելուց:

<sup>1</sup> St. Утверждение русского владычества на Кавказе, под редакцией ген. майора Патто, т. II, Тифлис, 1902, էջ 313.

<sup>2</sup> Ֆարսախը կամ ֆարսանգը=6-7 կիլոմետր:

<sup>3</sup> «Մասսիր-է-Սուլթանիե», էջ 258:

Քանի որ Աղասու ջոկատը գործում էր Ղարաբաղի շրջաններում և առավել աչքի ընկնողն էր, ապա Դուներուլիի մոտ խոսքը հենց նրան էլ վերաբերում է։ Արովյանը Վերք Հայաստանի»-ում հաճախ է նշում հայ և ադրբեջանցիների համատեղ ելույթները պարսից զորքերի դեմ։ Հնարավոր է, որ ցանկանալով ավելի գունավորել Աղասու ջոկատի հատուկ միսիան, Արովյանը նրա ջոկատը նկարագրել է ազգային տեսակետից միատարր կազմով։

Աղասու ջոկատի և ադրբեջանցի գյուղացիների միջև եղած կապերի այսպիսի ըմբռնումը դեռ այսօր էլ կարող է որոշ բաներ բացատրել, քանի որ 19-րդ դ. սկզբի ադրբեջանական ֆոլկլորային «Ջունգաներում» (ոտանավորների ժողովածուներում) պատահում են ադրբեջաներեն գրված աշուղական այնպիսի երգեր, որոնց եզրափակիչ տներում, որտեղ սովորաբար նշվում է հեղինակի անունը, կա «Աղասի» անունը, ընդ որում այդ երգերի բովանդակությունը ևս չի բացառում նրանց պատկանելիությունը Արովյանի Աղասուն։ Չէ որ այդպես են մեզ հասել հայ-ադրբեջանական աշուղների նաև մյուս երգերը (Շիրինի «Երթյաստի»-ն և ուրիշները)։

Այսպիսով, մենք կարող ենք համարել, որ Դուներուլիի տվյալ վկայությունը միանգամայն համապատասխանում է իրականությանը, քանի որ նա, որպես պարսից պաշտոնական պատմագիր, բանակից անմիջական ու ճշգրիտ ինֆորմացիա էր ստանում բոլոր եղևությունների մասին։ Բացի դրանից, հնարավոր է, որ նա այդ ժամանակ անձամբ գտնվել է պարսից բանակի շտաբում։ Նա մահացել է 1827 թ., այսինքն՝ ավելի շուտ, քան Արովյանը միտք է հղացել վեպ գրել Աղասու մասին (1830 թ.)։

Դուրս է գալիս, որ Աղասին սպանվել է հիշրայի 1226 թ., այսինքն՝ մ. թ. 1811 թ. և մենք նույնիսկ մի շարք մանրամասնություններ գիտենք այդ մասին։

Բայց Աղասու սպանության ժամանակի հարցը չի կարելի լիովին պարզ համարել։ Ես նկատի ունեմ այն, որ Դուներուլին, որը հազվադեպ է նշում իր նկարագրած անցքերի ամիսն ու ամսաթիվը, տվյալ դեպքում էլ չի նշում, թե 1811 թվականի որ ամսի քանիսին է տեղի ունեցել Աղասու սպանությունը։ Բայց այդ հարցում մենք, այնուամենայնիվ, կարող ենք որոշ ճշգրտում մտցնել, որովհետև Դուներուլին դեպքերը դասավորում է հաջորդական կարգով։ Այսպես, քանի որ Աղասու ջոկատի մասին պատմելուց առաջ նա հաղորդում է, որ Արբաս-Միրզան այդ ժամանակ գտնվում էր Նախիջևանում և ձմեռվա մոտենալու կապակցությամբ մտադիր էր վերադառնալ Պարսկաստան, ապա մենք կարող ենք ասել, որ Աղասու սպանությունը տեղի է ունեցել մոտավորապես 1811 թ. վերջերին՝ նոյեմբեր կամ դեկտեմբեր ամիսներին։

Այսպես ուրեմն, թեև մենք Արովյանի վեպի ընթերցումից առաջացած անախրոնիզմների վերլուծության հիման վրա էլ կարող էինք եզրակացնել, որ Աղասին, ամենայն հավանականությամբ, սպանվել է 1827 թվականից շատ առաջ, թեև վեպի տված տեղեկությունները հնարավորություն չեն տալիս թեկուզ մոտավորապես որոշելու Աղասու մահվան տարին, ապա այժմ մենք լիովին համոզվում ենք, որ նա սպանվել է 1811 թ. վերջերին, որի մասին ինքը Արովյանը մեզանից ավելի լավ գիտեր։

Այդ շրջանի պատերազմների պատմությամբ զբաղվող պարսիկ պատմագիրներից Աղասու ջոկատի մասին մենք նույնպիսի վկայություն ենք գտնում Մուստուֆի Մուհամմեդ-Թաղիի (հայտնի է «Սուպահր» ծածկանունով) «Կա-

ջարների պատմության» 1-ին հատորում, նրա «Նասելիս-ատ-Տավարիխե»-ում [Թեհրան, վիմագրակ. հրատ., հիշրայի 1304 թ. (մ. թ. 1887 թ.) էջ 115]:

Մուստուֆին գրել է Նասր-էդ-դին շահի թագավորության պատմությանը, իսկ նախորդ շրջանի պատմությունը տվել է խիստ համառոտ:

Այդպես է նա վարվել նաև Աղասու ջոկատի պատմության հետ: Մասնավորապես, նա չի հիշատակում Աղասու անունը, սահմանափակվելով միայն այն տեղեկությամբ, թե ջոկատը կազմված էր «այն երկրամասերի բնակիչներից, որտեղ գտնվում էին հայերի համայնքները», ապա լուր է կտ դարձող պարսից զորքերի վրա Աղասու ջոկատի կատարած հարձակումների մասին: Նույնիսկ Աղասու ջոկատի լիկվիդացմանը մասնակցած պարսից զորքերին վերաբերող տեղեկություններում նա չի հիշատակում խոյի սարրազներին, այլ սահմանափակվում է միայն գոլյամ-հրացանակիրներով, թեև սրանց էլ նշում է ընդհանուր հրամանատարի՝ էխսան-խանի անունով: Մնացյալում նա ճշտությամբ վերապատմում է 'Իունրուլիի ասածները, ընդ որում պահպանելով նույնիսկ այս վերջինի գործի վրիպակները:

Մուստուֆիի պատմությունը, այնուամենայնիվ, որոշ նշանակություն ունի: Ամենից առաջ դա վերջնականապես ցրում է այն բոլոր ենթադրությունները, թե 'Իունրուլիի պատմած այդ իրադարձությունը պատահական է ու աննշան և վերջնականապես հաստատում է, որ Աղասու մահը իրոք տեղի է ունեցել հիշրայի 1226 թ. (մ. թ. 1811 թ.), վերացնելով 'Իունրուլիի նշած այդ թվականի ճշտության վերաբերմամբ եղած տարակուսանքները (այդ տարակուսանքներն առաջանում են նրանից, որ 'Իունրուլին Աղասու ջոկատի պատմությանը նախորդող տողերում խոսում է «նովրուդի» մասին և քնավ չի տալիս հիշրայի հաջորդ 1227 թ. իրադարձությունները: Այս բոլորը կարող է առիթ տալ ենթադրելու, որ Աղասու սպանությունը, թերևս, պետք է վերագրել 1812 թ.):

Այսպիսով, այժմ մենք համոզվում ենք, որ Աղասին 1827 թ. հոկտեմբերի 1-ին ոչ մի կերպ չէր կարող գտնվել Երևանի բերդի պարիսպների մոտ:

Բայց այդ դեպքում որտեղից է ծագել 1827 թ. «Աղասու» վերաբերյալ հիշատակումը:

Այն, ինչ Պ. Պոռշյանն է պատմում այդ «Աղասու» մասին, իրոք տեղի է ունեցել նշված ժամանակ, բայց դա պատահել է ոչ թե Աղասու, այլ բոլորովին մի ուրիշ անձնավորության, այն է՝ հետևակային 20-րդ դիվիզիայի օրեր-առդիտոր Բելովի հետ, որի մասին մենք գեներալ Պասկևիչի՝ ցարին գրած 1827 թ. հոկտեմբերի 3-ի ղեկույցում կարդում ենք հետևյալը. «Հոկտեմբերի 1-ին, փոխհրաձգությունից հետո, առավոտյան ժամը 8-ին, արևելյան աշտարակում ու արևելյան պարսպի վրա երևացին մի քանի բանակիչներ, որոնք թափահարում էին սպիտակ թաշկինակները, իսկ հետո սկսեցին վազել դեպի դիրքերը, իջնելով թմրի քանդված տեղերով: Հենց այդտեղ էլ եկավ գեներալ-լեյտենանտ Կրասովսկին իր ջոկատի մի մասով: 'Իարպասները քանդված, ընկած էին: Առդիտոր Բելովը, որը լեզուն գիտնալով մտածում էր բանակցությունների մեջ մտնել պաշտպանվողների հետ, ֆալկոնների կրակոցից ընկավ անշնչացած, որպես այդ օրվա վերջին զոհը: 'Իարպասները ջարդված էին. մերոնք ներխուժեցին այնտեղ...»<sup>1</sup> և այլն: Ինչպես երևում է այստեղից,

<sup>1</sup> Акты, собранные Кавказской археологической комиссией, т. VII, стр. 506, документ № 523.

از امانه اخیان قریب باغ ساختند و بانکه از امانه مزبور در قبر قلعه را که از سقنقهای  
مشهوره قریب باغ است مامن ندانسته از هم با جدا گردان و نهاده یک و مکانی  
بسیار صعب را که از هر جانب مشعل بود و از در فرسخ جنگل آتشی بود مسجی  
ساخته بودند و در میان و خلا مان قنکچی بی پروا از راه از دیوران باغار ساند  
ند و خورد و دست زد و این همه دند با لخره حبال و اطفال امار السیروامه ال و احوال  
اظهار امارت کرده بسیاری از مردان امارات قبل و از راه بیل خلفا فرین بقراجه داع  
معاودت و در مرض راه باز بقیه مردان از امانه که خود را بجهت کما کشته از  
چشم سپاه منصور رها یافته بودند و شانه و دست و پاهای خود را بجهت  
اشمار جنگل کشیده غرق میشدند و علی الفقه شلخته می نمود و جنگی که در قوه  
داشتند بخود منتهی قاضی نام بر داشت اقامت کشته دیگران را بدو بجا داد دست  
از مال و مال و احوال کشته مطاعت همان مکان نمودند و چون دانستند که  
سقنق و جنگل و کوه و کل مانع اینگونه باطل نمیتواند شد بعد از چندی لابد و ناچار  
بقراجه داع احمق و زبیر ساید و ملت ظاهر اسایش گزین شدند و نایب السلطه  
از قریب محبت محصل تعیین و اسرای امارا گرفته باغایس دادند و دست و جنس بسیار  
هر بر ای مدد گذار امارا حایت فرمودند و درین اثنا با جماع علیه نوب نایب السلطه  
رسید که در وبه از نصرت کرم و هاتق میخواستند برای ساختن مقری بجهت  
و از وقت میاورند و لیکن اندک سپاه نصرت بنامه اند از جنرال خود و ایک فوج  
از بالالت خود برای محافظت قلعه مقری می دادند و نوب نایب السلطه  
میرزا احدیستوفی را بان فوجی همادان و جعفر قلخان مقدم و سر بازان مقدم  
بایکصد سوار از خلا مان جلا دشت نشان تعیین و مقر داشتند که از راه  
احمد آباد رفته و میان مقری و میان سر راه را امارا بگیرند و ایچ باید از مقابل

հաստատվում է նույնիսկ այն, որ կրակոցը տեղի է ունեցել Քերբդի դռան բանալու ծակից»:

Պատմությունը և իրականությունը միմյանց հակադրված են, և իրականությունը հաճախ չի համընկնում պատմությանը։

Եթե մինչև այժմ նշում էին, որ Աղասին որպես սպա ռուսական զին-  
վորական ծառայության մեջ է եղել Գրաստովսկու ջոկատում, ապա այդ գննե-  
րալի հիշողությունները Բևուլի մասին ցրում են ամեն մի տարակուսանք և  
ցույց են տալիս, որ նման տեսակետը չի համապատասխանում իրականու-  
թյանը:

Այդ զբաղ աուդիտոր Բելովի մասին Կրասովսկին հաճախ է հիշատակում, իսկ 1827 թ. մեզ հետաքրքրող իրադարձության մասին պատմում է հետևյալը. «Քանի որ մենք շուտով կարողացանք մաքրել դեպի ջրափոսը տանող դարպասները, ես դեպի բերդը տանող ներքին դարպասները գտա դեռևս փակ, և երբ գնեցիք լապտի, մի քանի սպանների և գվարդիական զինվորների հետ մոտեցա դրանց, հրամայեցի 20-րդ դիվիզիայի 9-րդ կարգի օբեր-աուդիտոր Բելովին, որն ինձ մոտ էր գտնվում և գիտեր թաթարներն, դարպասների վրա եղած անցքից բղավել, որպեսզի դարպասները բացեն»:

Հենց այդ ժամանակ ինքը՝ Հասան-խանը, որը գտնվում էր դարպասների մոտ, հրացանով կրակեց դեպի անցքը և զնդակով ջարդեց Բելովի գլուխը, որի կորուստը առավել ևս զգալի է, որովհետև նա երիտասարդ տարիքում էր...»<sup>1</sup> և այլն: Բացառված չէ այն, որ կովկասյան փոխարքայության արխիվում դեռևս կարող են հայտնաբերվել Աղասու հետ կապված հարցերը լուսաբանող նոր նյութեր:

Որոշ վերապահություններով այդ նյութերի շարքը կարող են դասվել նաև Երևանի հին բնակիչների այն հիշողությունները, որ հավաքել է Երևանի սեմինարիայի ուսուցիչ Կ. Եուզինը իր «Երևանի առումը (ըստ հին բնակիչների պատմածների)»<sup>2</sup> հոդվածում:

Նրա հոդվածը գրված է Երևանում 1884 թ.: Տեղեկությունները նա հավաքել է ծերացած հայերից՝ Երևանի ուսուցչական գիմնազիայի 3-րդ դասարանի սաների միջոցով: Նրանց անունները չեն նշված:

Բերդի պարսպի մոտ տեղի ունեցած իրադարձությունն այստեղ բնավ չի կապվում Աղասու անվան հետ: Բելովը ևս ոչ մի տեսակետից չի նույնացվում Աղասու հետ: Բայց, այնուամենայնիվ, վերջինի մասին ասված է հետևյալը. «Այդ դարաշրջանից ժողովրդի հիշողության մեջ պահպանված ուրիշ անուցներից ուշագրություն արժանի է Աղասին...» և այլն<sup>3</sup>, և հենց այստեղ էլ հիշատակություն է արվում Խ. Աբովյանի վեպի մասին:

Եվ ահա հենց այդ պատճառով էլ հարց է ծագում՝ ինչու Խ. Աբովյանը ցանկացել է ցույց տալ, որ Աղասին ղոհվել է 1827 թ.:

Կարծում ենք, որ այժմ մենք կարող ենք միանգամայն որոշակի պատասխան տալ այդ հարցին:

Որ Երևանը ռուս զորքերի կողմից գրավելիս Աղասին չէր կարող գտնվել բերդի դարբասների մոտ, Աբովյանը չէր կարող այդ չիմանալ: Բայց իր գեղարվեստական մտահղացման տեսակետից նա ցանկացել է օգտագործել 1827 թ. բերդում կատարված իրողությունը և այնպես անել, որ Աղասին իր վախճանը գտնի բերդում՝ իր հոր հետ տեսակցելիս: Ինչու: Որովհետև Աբովյանը ցանկացել է իր վեպում առավելագույն չափով կապ պահպանել ազգային ազատագրական շարժման հետ և վճռել է մի հայտնի չափով օգտագործել նաև Երևանի գրավման պատմությունից առնված իրադարձությունները, քանի որ հատկապես այդպիսի վախճանն ավելի էր համապատասխանում ազատագրա-

<sup>1</sup> Дневник генерала Красовского, 1826-1828 гг. (Из рукописей военно-учебного комитета главногo штаба, опубликованного в „Кавказском сборнике“, т. XXII, Тифлис, 1901, стр. 32—33, о Белове еще, стр. 23, 25, 26.

<sup>2</sup> „Сборник материалов для описания местностей и племен Кавказа“, выпуск IV, отдел 2-й, էջ 34—39.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 38:

կան շարժման ձգտումներն արտահայտող Աղասու սխրագործությունները գովերգելու նրա մտահղացմանը<sup>1</sup>։

Այսպես ուրեմն, խ. Արովյանի բոլոր «հակասությունները» հիմնականում բացատրվում են այստեղ բերված նկատառումներով. Արովյանը գիտեր Աղասու կյանքի ու գործունեության փաստական պատմությունը, բայց այդ պատմությունը զեղարկատական մարմնավորման ընթացքում ենթարկվել է որոշ փոփոխությունների։

<sup>1</sup> Քանի որ Պոռշյանները ոչ մի առնչություն չեն ունեցել այս պատմությունից որևէ փաստ վեպի հեղինակին հաղորդելու հետ, ապա նրանց «վկայությունները», որ լույս են տեսել բուն վեպից կես դար հետո, խանգարում էին վեպի ճիշտ ընթանմանը, որովհետև Արովյանը էապես այլ կերպ է օգտագործել այդ իրադարձությունները իր վեպի վերջավորության համար։

Հավելված առաջին

- «...و قوجی سربازان خوبی را || بسر کر دکی احسان خان سرهنگ || 262  
 263 || با قدری از غلامان تفنگچی مامور بگوشمال ارامنه || اخبان قراباغ  
 ساختند و با انکه ارامنه مزبوره قبر قلعه را که از سفنا قهای || مشهوره  
 قراباغ است ما من بدانسته از همانجا در همان روزها حرکت و مکانی ||  
 بسیار صعب را که از هر جانب مشتمل به دوازده فرسخ جنگل ابنوه بود  
 مسکن || ساخته بودند سربازان و غلامان تفنگچی بی پروا از راه  
 آزادجیران بانها رسانیده || زد و خورد و ستیز و اویر نمودند بالاخره  
 عیال و اطفال انها را اسیر و اموال و احوال || انها را غارت کرده بسیاری  
 از مردان انها را قتل و از راه بل خدا افرین بقراجه داغ || معاودت و در  
 عرض راه باز بقیه مردان ارامنه که خود را بجنگلها کشیده از || چنک  
 سپاه منصور رهایی یافته بودند دو شبانه روز دسته دسته خود را به یناه ||  
 اشجار جنگل کشیده مخفی میشدند و علی الغفلة شلنکی نموده جنگی  
 که در قوه || داشتند مینمودند تا اقسائی نام برزک انها مقتول گشته  
 دیگران لابد و ناچار دست || از مال و عیال و اطفال شسته معاودت بهمان  
 مکان نمودند...»

Հավելված երկրորդ

«انگاه نساب السلطنه احسانخان سرهنگ را باجمعی از غلامان  
 تفنگچی مأمور به اراضی اخبان قراباغ ساخت اونیز با قیر قلعه که  
 معقلی منبع بود بناخت و باسکنه ان اراضی که جماعتی از ارامنه بودند  
 رزم داده ایشان را شکست و زن و فرزند و مواسی و اموال انگروه را  
 مأخوذ داشته از راه بل خدا افرین بقراجه داغ مراجعت کرد و انجماعت  
 چون این بدیدند ناچار کوچ داده بقراجه داغ شتافتند...»